

“ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՉԱՓԱՀԱՍ ԱԶԳԱԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ  
ՄՆՆԴԱՅԻՆ ՈՒՂԵՅՈՒՅՅՆԵՐԻ” ՄՇԱԿՈՒՄ

*Հարությունյան Բ.Ն., Պետրոսյան Վ.Ֆ*

Կուրորտաբանության և ֆիզիկական բժշկության ԳՀԻ, Երևան, Հայաստան

Վերջին տարիներին ամբողջ աշխարհում մարդկության առողջության կանխարգելման և պահպանման գործում խիստ կարևորվում է սննդի դերը: Մննդի նշանակությունը հստակ սահմանագծվում է ինչպես ոչ ինֆեկցիոն քրոնիկ հիվանդությունների, այնպես էլ՝ մի շարք այլ սնունդ-կախյալ հիվանդությունների /երկաթ-պակասություն, սակավարյունություն, օստեոպորոզ և այլն/ էթիոպաթոգենեզում, կանխարգելման և բուժման մեջ:

Նշված հիվանդությունների կառավարման մեջ բազմաթիվ ուրիշ քաղաքականությունների հետ մեկտեղ խիստ կարևոր է ազգաբնակչությանը սննդի և հիվանդությունների մասին հավաստի, ճշգրիտ, պարզ և մատչելի տեղեկատվության և խորհրդների հաղորդումն ու համապատասխան ուսուցումը: Այս քայլը հատկապես կարևորվում է մեր ժամանակներում, երբ մեդիան հեղեղված է “մոդայիկ” սննդի մասին կասկածելի, հաճախ իրարամերժ, սխալ տեղեկատվությամբ, ինչն էլ շատ խրթին է դարձնում ինչպես առանձին հիվանդի հետ բժշկի աշխատանքը, այնպես էլ՝ հասարակական առողջապահության մեջ որևէ ներմուծություն անելը /օրինակ՝ մեր երկրում այլուրի հարստացման վերջին դեպքերը/:

Կուրորտաբանության և ֆիզիկական բժշկություն ԳՀԻ-ը ՀՀ ԱՆ և ԱՀԿ համագործակցության շրջանակներում կազմել է “Հայաստանի Հանրապետության Չափահաս Բնակչության Մննդային Ուղեցույց”։ Նախապատրաստական շրջանում ստուգվել է ՀՀ ազգաբնակչության փաստացի սնունդը, դրա սննդային կազմը՝ մակրո-, միկրոտարրերով, այդ սննդատարրերի հիմնական աղբյուր-սննդատեսակները, որոշվել է ՀՀ Ազգաբնակչության հիմնական հիվանդացությունների և սննդի կապը, վերլուծվել է սննդատեսակների հասանելիությունը, որոշվել է ՀՀ հասանելի և օգտագործվող ավանդական սննդատեսակների ցանկը: Այս բոլոր նախնական հետազոտությունների հիման վրա կազմվել է սննդային ուղեցույց՝ բուրգի տեսքով և ուղեկցող խորհուրդներ, որը հաստատվել է ՀՀ ԱՆ կողմից: